

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**Համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գրանցված անձանց
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը
տեղեկացնում է ժամանակավոր թափուր պաշտոնի վերաբերյալ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ, ՏՈՒՐԻԶՄԻ,
ԱՌԵՎՏՐԻ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ԳՈՎԱԶԴԻ ԲԱԺՆԻ ՊԵՏ**

**2.1-4
(ծածկագիր)**

ա) կազմակերպում է բաժնի աշխատանքները, իր իրավասության շրջանակներում տալիս է հանձնարարականներ բաժնի աշխատակիցներին և վերահսկում է դրանց ժամանակին և պատշաճորակով կատարումը:

բ) անհրաժեշտության դեպքում, բաժնի լիազորությունների սահմաններում նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր, միջնորդագրեր և այլ գրություններ:

գ) անհրաժեշտության դեպքում՝ մասնակցում է համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների կողմից կազմակերպվող քննարկումներին և այլ միջոցառումներին, այդ մարմիններից, պաշտոնատար անձանցից, կազմակերպություններից ստանալով բաժնի առջև դրված խնդիրների և գործառույթների իրականացման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր:

դ) ապահովում է իրավական ակտերի նախագծերի, ծրագրային փաստաթղթերի մշակումը և նյութերի փորձաքննությունը, ստորագրում է իր և բաժնի անունից պատրաստվող փաստաթղթերը:

ե) կազմակերպում և համակարգում է համայնքի տեսարժան վայրերի, պատմամշակույթային կոթողների, հուշարձանների, ինչպես նաև մարդածին և բնածին առավելությունների քարտեզագրման աշխատանքները, կազմում համապատասխան ուղեցույցեր:

զ) Իրականացնում է մոնիտորինգ, տեղական և միջազգային ծրագրերի իրականացման ուղղությամբ, ըստ ոլորտների կատարում է ուսումնասիրություններ և վերլուծություններ, ներկայացնում է առաջարկություններ: Համապատասխան բաժինների հետ համատեղ կազմակերպում և ապահովում է ծրագրերի իրականացման գործընթացը:

է) / համակարգում է համայնքի տարեկան աշխատանքային պլանը, հնգամյա զարգացման ծրագրերը և տեղական տնտեսության զարգացման ծրագրերը: Համակարգում է էներգետիկայի, բնապահպանական, աղբահանության կառավարման ոլորտները և դրանց շրջանակներում իրականացնում աշխատանքներ: Կազմակերպում է վարում է ոլորտին վերաբերվող տեղեկատվական բազան:

ը) Ապահովում է համայնքի անունից քույր քաղաքների, միջազգային կազմակերպությունների և այլ կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերից, համաձայնագրերից և այլ երկկողմանի պարտավորություններից բխող աշխատանքների իրականացումը: Պատասխանատու է համայնքի արտաքին կապերի /դիրքավորման/, համայնքի առաջնդման համար:

թ) Ապահովում է համայնքի բնակչության մասնակցությունը ծրագրերի իրականացման ընթացքում: Համայնքային ծրագրերի ապահովման նպատակով կազմակերպում է հանդիպում- քննարկումներ բնակիչների, տնտեսավարող սուբյեկտների և այլ թիրախային խմբերի հետ ըստ ոլորտների/բնապահպանություն, էներգետիկա, գյուղատնտեսություն, սոցիալական, տնտեսական, երիտասարդներ և այլն/:

ժ) ներկայացնում է առաջարկություններ՝ բաժնի համայնքային ծառայողներին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ատեստավորելու, վերապատրաստելու, խրախուսելու, կարգապահական տույժի ենթարկելու վերաբերյալ, ինչպես նաև ատեստավորումից առնվազն երկու շաբաթ առաջ ներկայացնում է բաժնի համայնքային ծառայողների ծառայողական բնութագրերը:

ժա) կազմակերպում է քաղաքացիների դիմում-բողոքների սահմանված կարգով քննարկումը և արդյունքները ներկայացնում աշխատակազմի քարտուղարին:

ժբ) աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ կազմակերպում է բաժնի գործառույթների հետ կապված խորհրդակցություններ, հանդիպումներ, ապահովում է այդ խորհրդակցությունների, հանդիպումների արձանագրությունների կազմումը:

ժդ) մշակում է ծրագրեր՝ համայնքի բնակավայրերի բարեկարգման, կանաչապատման, աղբահանության, սանիտարական սպասարկման աշխատանքների կազմակերպման արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ:

ժե) ուսումնասիրում և առաջարկություններ է ներկայացնում համայնքի բնակչության համար հանգստի վայրեր կազմակերպելու և համայնքի տարածքում տուրիզմի զարգացման վերաբերյալ:

ժզ) կատարում է բիզնեսի և տուրիզմի տեղեկատվական բազայի հարստացման համար անհրաժեշտ աշխատանքներ, կազմակերպում է բիզնեսի և տուրիզմի հետ առնչվող կազմակերպությունների ղեկավարների, ձեռնարկատերերի հավաքներ և քննարկումներ, կազմում է տարաշաճրջանի տեսարժան վայրերի, պատմամշակութային կոթողների, հուշահամալիրների ուղեցույցներ և տրամադրում անհրաժեշտ տեղեկատվություն:

ժէ) ներկայացնում է առաջարկություններ համայնքի տարածքում փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման տարեկան ծրագրում համայնքի մասնակցության և զբոսաշրջության զարգացմանը նպաստող միջոցառումների իրականացման վերաբերյալ:

ժը) վերահասկում է վարչական տարածքներում տեղական հարկերի, տուրքերի և վճարների ժամանակին հավաքագրմանը: Համակարգում է հանրային սննդի կազմակերպման և իրացման, ալկոհոլային խմիչքի և ծխախոտի վաճառքի, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, և տեխնիկական հեղուկների վաճառքի, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի վաճառքի, բացօթյա վաճառքի և տոնավաճառների, ինչպես նաև ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվությունների տրամադրման գործընթացը:

ի) ապահովում է մշակվող ծրագրերի տեխնիկա-տնտեսագիտական հիմնավորումները, գնահատում համայնքի հնարավորությունները և ներկայացնում առաջարկություններ ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական և տնտեսական միջոցների վերաբերյալ:

իա) իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Բաժնի պետն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ:

Նշված ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

ա) ունի բարձրագույն կրթություն, համայնքային ծառայության կամ պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ վարչական կամ հայեցողական կամ ինքնավար պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երկու տարվա փորձ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ:

բ) ունի <<Համայնքային ծառայության մասին>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Իրավական ակտերի մասին>>, <<Հասարակական կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն:

գ) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը:

դ) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,

ինչպես նաև սոցիալական մեդիայի տիրապետում.

ե) տիրապետում է օտար լեզվի:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 2024 թվականի մարտի 19-ը ժամը 10:00:

Խնդրում ենք դիմումներն ուղարկել միայն էլեկտրոնային տարբերակով՝ e-request.am էլեկտրոնային հասցեին:

Համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գրանցված անձինք լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են դիմել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմ (ք. Երևան, Կառավարական տուն N 3, հեռ. 010-515131):

**ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
աշխատակազմ**